



ՀՀ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՈՂ ՃՅՈՒՂԵՐԻ ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՁԵՐՆՈՒԹՅԱՆ ԲԱԶՄԱՇԱՀԱՌՈՒ ԽՄԲԻ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 14

07.11.2019թ. | Ժամը 16:00-17:30 | Գերմանիայի միջազգային համագործակցության
ընկերության (GIZ) գրասենյակ

Մասնակիցներ՝ Բազմաշահառու խմբի անդամներ

Նախագահող՝	Լիլիա Շուշանյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ
	Կարեն Իսախանյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ
	Արման Պողոսյան	Ֆինանսների նախարարի տեղակալ (այլընտրանքային անդամ)
	Արթուր Մանուկյան	Պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ (այլընտրանքային անդամ)
	Վահե Վարդանյան	«Գեոմայինգ» ՍՊԸ-ի գլխավոր տնօրեն
	Արմեն Ստեփանյան	«Լիդիան Արմենիա» ՓԲԸ-ի կայուն զարգացման գծով փոխնախագահ
	Սոնա Այվազյան	«Թրանսփարենսի Ինթերնեշնլ» հակակոռուպցիոն կենտրոնի գործադիր տնօրեն
	Հարություն Մովսիսյան	Երևանի պետական համալսարանի օգտակար հանածոների հանքավայրերի դոկտոր և հետախուզման ամբիոնի դոցենտ
	Ինգա Զարաֆյան	«Էկոլուր» տեղեկատվական հասարակական կազմակերպության նախագահ
	Արթուր Համբարձումյան	«Հասարակական ծայն» («ՍիվիլՎոյս») հասարակական կազմակերպության խորհրդի անդամ
	Արամ Օսիկյան	«ԱՍՍԱԹ» ՍՊԸ-ի գլխավոր տնօրեն (այլընտրանքային անդամ)
	Անդրանիկ Աղաբալյան	«Գեոէկոնոմիկա» ՓԲԸ-ի գլխավոր տնօրենի տեղակալ (այլընտրանքային անդամ)

Հյուրեր՝

Լուսինե Թովմասյան	քարտուղարության ղեկավար
Անահիտ Առուստամյան	քարտուղարության փորձագետ
Սաթենիկ Հովհաննիսյան	հասարակայնության հետ կապերի փորձագետ
Լիդյա Կիլպի	ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարություն
Օլեսյա Տոլոչկո	ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարություն
Ենս Պետերսեն-Թումզեր	Գերմանիային միջազգային համագործակցության ընկերություն
Ալեքսանդր Դրագոյլովիչ	Գերմանիային միջազգային համագործակցության ընկերություն
Գոռ Խաչատրյան	Գերմանիային միջազգային համագործակցության ընկերություն
Նարինե Թադևոսյան	Համաշխարհային բանկի գրասենյակ Հայաստանում
Գոհար Ղազինյան	«Իրավաբանների Հայկական Ասոցիացիա» ՀԿ, բնապահպանական/կառավարման հարցերով փորձագետ
Օլեգ Դուլգարյան	«Համայնքային Համախմբման և Աջակցության Կենտրոն» ՀԿ նախագահ, (մարզային ներկայացուցիչ)
Վիկտորյա Բուռնազյան	«ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ, փորձագետ
Ֆենյա Եփրեմյան	թարգմանիչ

Արձանագրող՝ Անահիտ Առուստամյան

ՕՐԱԿԱՐԳ

1. ՀՀ ԱՃԹՆ-ի բազմաշահառու խմբի (ԲՇԽ-ի) նիստի բացում

Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության «Հանրային ֆինանսների կառավարում Հարավային Կովկասում» ծրագրի տնօրեն Ենս Պետերսեն-Թումզեր, Բազմաշահառու խմբի կառավարության խմբակցության անդամ, նիստը նախագահող ՏԿԵՆ նախարարի տեղակալ Լիլիա Շուշանյանը, ԱՃԹՆ-ի միջազգային և ազգային քարտուղարությունների ներկայացուցիչները ողջունեցին ներկաներին և հակիրճ ներկայացրին կատարված աշխատանքներն ու քննարկվելիք հարցերը:

Օրակարգային հարցերը

1. ԱՃԹՆ-ի վավերացման գործընթացի ներկայացում

ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության վավերացման գործընթացի ղեկավար **Լիդիա Կիլպին ներկայացրեց** վավերացման գործընթացը: **Նշեց**, որ վավերացման նպատակն է գնահատել՝ ինչպես են ԱՃԹՆ-ի ստանդարտով պահանջվող տվյալները բացահայտված ԱՃԹՆ-ի զեկույցում, առցանց հարթակում, պետական մարմինների կայքերում, ինչպես են ԲՇԽ-ի երեք՝ կառավարության, հանքարդյունահանող ընկերությունների ու քաղաքացիական հասարակության խմբակցությունները միասին աշխատում, ինչպես է ԲՇԽ-ն գործում որպես երկխոսությունների ու որոշումների կայացման հարթակ: **Ներկայացվեց**, որ ԱՃԹՆ-ի նոր ստանդարտը հաստատվել է 2019 թվականի հունիսին Փարիզում: Հայաստանի ԱՃԹՆ-ի վավերացումը վերաբերում է ԱՃԹՆ-ի 2016 թվականի ստանդարտի պահանջների կատարմանը: ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության վավերացնողների խմբի կատարված գրառումները ներկայացվելու են անկախ վավերացնողին՝ անկախ քննարկման ու գնահատման, այնուհետև՝ ԱՃԹՆ-ի միջազգային խորհրդի հաստատմանը: Մանրամասն գնահատվելու է ԱՃԹՆ-ի ստանդարտի յուրաքանչյուր պահանջի և ենթապահանջի կատարումը: Որպես օրինակ, **ներկայացվեցին** Ուկրաինայի ԱՃԹՆ-ի վավերացման շրջանակում տրված գնահատականները: Ներկայացվեց, որ ԱՃԹՆ-ի վավերացման ժամանակ տրված գնահատականի ամենացածր գնահատականը «առաջընթաց չկա» կարգավիճակն է, իսկ ամենաբարձր՝ «բավարարող առաջընթացը»: Վերջնական գնահատականը տրվում է՝ ամփոփելով յուրաքանչյուր առանձին պահանջի առաջընթացի մակարդակը: Ամենաբարձր՝ «բավարարող առաջընթաց» կարգավիճակը տրվում է այն դեպքում, երբ ԱՃԹՆ-ի յուրաքանչյուր պահանջի ու ենթապահանջի կատարումը գնահատելիս բոլորին տրվել է «բավարարող առաջընթաց» գնահատական: Երկրորդ ամենաբարձր մակարդակը «զգալի առաջընթացն» է, երբ պահանջների մեծամասնության կատարմանը տրվում է «բավարարող առաջընթաց» գնահատական:

Նեկայացվեցին վավերացման ընթացքում տարբեր դերակատարների դերերը և ազդող գործոնները: ԲՇԽ-ի անդամների, ԱՃԹՆ-ի ազգային քարտուղարության և այլ շահագրգիռ կողմերից ստացված տեղեկատվության հիման վրա ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարությունը կազմելու է նախնական հաշվետվություն, որն այնուհետև տրամադրվելու է անկախ վավերացնողին, ով ուսումնասիրելու է նախնական հաշվետվությունը, ներկայացնելու է յուրաքանչյուր պահանջի կատարման գնահատման վերաբերյալ առաջարկներ ու մեկնաբանություններ, այնուհետև վերջնական փաստաթուղթը տրամադրվելու է ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության բազմաշահառու խմբից կազմված ԱՃԹՆ-ի խորհրդին, որը դիտարկելու է Հայաստանի՝ ԱՃԹՆ-ի ստանդարտի

պահանջների բավարարելու հարցը և կայացնելու վերջնական որոշում: Հայաստանի ԱՃԹՆ-ի վավերացման վերջնական որոշումը նախատեսվում է կայացնել 2020 թվականի փետրվարին կայանալիք ԱՃԹՆ-ի Խորհրդի նիստին կամ 2019 թվականի առաջին եռամսյակի ընթացքում: Հայաստանի վավերացման գործընթացը սկսվել է սեպտեմբերի 9-ից և գնահատվելու են 2015 թվականին ԱՃԹՆ-ի ներդրման պատրաստականության հայտարարումից մինչև սեպտեմբերի 9-ը Հայաստանի ԱՃԹՆ-ի իրականացման աշխատանքները: **Նշվեց**, որ մինչև Խորհրդի վերջնական որոշումը, երկիրը նաև վավերացման ժամանակահատվածում կարող է հրապարակել բաց թողնված տեղեկատվությունը, ուղղել գործընթացի բացերը: Խորհուրդը սահմանել է որոշակի չափանիշներ նման դեպքերի համար՝ որոշում ընդունելիս հաշվի առնելու նոր տեղեկատվությունը, որը մինչև վավերացման գործընթացի սկսելը բաց էր թողնվել: **Նշվեց**, որ վավերացման ժամանակ գնահատվելու է նաև էական ազդեցությունը, անդրադարձ է կատարվելու ԱՃԹՆ-ի պահանջների կատարման բացերի ուղղմանը, որի վերաբերյալ տեղեկատվությունը նախքան որոշում կայացնելը ողջամիտ ժամկետներում նույնպես ներկայացվելու է Խորհրդին:

Նշվեց շատ կարևոր հանգամանք, որ վավերացման գործընթացում երկրի ԱՃԹՆ ԲՇԽ-ն հնարավորություն ունի նույնպես ծանթանալու վավերացման փաստաթղթերին ու վավերացման հաշվետվությանը և դրանց շուրջ ներկայացնելու իր նկատառումները: Անկախ վավերացնողի կողմից վավարեցման հաշվետվության վերջնական նախագիծը կազմելուց հետո, որի պատրաստման համար նախատեսված է 8 շաբաթ, այն տրամադրվում է երկրի ԱՃԹՆ ԲՇԽ-ի անդամներին, ովքեր 3 շաբաթվա ընթացքում կարող են տրամադրել իրենց նկատառումները, եթե ինչ-որ առաձին գնահատականների հետ համաձայն չեն, դրա պատճառները և հիմնավորումը, ինչպես նաև ներկայացնեն տեղեկատվություն, որը ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության կողմից տեղեկատվության հավաքագրման ժամանակ բաց է թողնվել: Սա շատ կարևոր է՝ համոզվելու, որ գնահատումը արտացոլում է իրական պատկերը:

Ներկայացվեց վավերացման գործընթացի ժամանակացույցը: **Նշվեց**, որ առաջին փուլի՝ տեղեկատվության հավաքագրման ու շահագրգիռ կողմերի հետ քննարկման համար նախատեսված է առավելագույնը 3 ամիս, հաջորդ փուլի՝ Անկախ վավերացնողի կողմից վավերացման հաշվետվության պատրաստման համար պաշտոնապես 8 շաբաթ է նախատեսված, և որը ներառում է 3 շաբաթ՝ ԲՇԽ-ի կողմից վավերացման փաստաթղթերի շուրջ նկատառումներ ներկայացնելու համար: Այնուհետև վավերացման հաշվետվությունը և այլ փաստաթղթերը տրամադրվում են ԱՃԹՆ-ի Խորհրդի վավերացման

հանձնաժողովին, որն էլ եզրակացություն է տրամադրում երկրի գնահատականի վերաբերյալ: Այս առումով հստակ սահմանված ժամկետներ չկան, սակայն նախատեսվում է Հայաստանի ԱՃԹՆ-ի վավերացման հարցը ընդգրկել 2020 թվականի առաջին եռամսյակի Խորհրդի նիստի օրակարգում:

Ներկայացվեց վավերացման գնահատման արդյունքների հետևանքները: **Նշվեց**, որ եթե երկրին տրվում է «բավարարող առաջընթաց» կարգավիճակ, հաջորդ վավերացումը լինելու է 3 տարի հետո, սակայն իրական սեփականատերերի բացահայտման պահանջների իրականացման վավերացումը անցկացվելու է 2021 թվականին: «Զգալի առաջընթաց» կարգավիճակի դեպքում ԱՃԹՆ-ի Խորհուրդը որոշում է, թե 3-18 ամսվա ընթացքում երբ կլինի հաջորդ վավերացումը՝ կախված բացերից, և այն նպատակ ունի գնահատելու նախորդ վավերացումից հետո արձանագրած առաջընթացը և բարելավումները:

ԲՇԽ-ի կառավարության խմբակցության անդամը **հարց հնչեցրեց՝** երբվանից է հաշվարկվում վավերացման գործընթացի առաջին փուլի սկիզբը, որի համար նախատեսված է 3 ամիս: ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության ներկայացուցիչը պատասխանեց, որ Հայաստանի համար այն սկսվել է սեպտեմբերի 9-ից: ԲՇԽ-ի կառավարության խմբակցության անդամը հավելեց, որ Հայաստանի ԱՃԹՆ-ի կողմից հնարավորինս սեղմ ժամկետներում կտրամադրվի ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության կողմից ցանկացած հարցված տեղեկատվությունը: ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության ներկայացուցիչներն ու Հայաստանի ԱՃԹՆ ԲՇԽ-ն ու ազգային քարտուղարությունը փոխադարձ պայմանավորվեցին առավելագույնս օպերատիվ աշխատել, որպեսզի սահմանված ժամկետներից աշխատանքների ուշացումներ չլինեն, և փաթեթը պատշաճ կերպով ներկայացվի Խորհրդի նիստին:

ԱՃԹՆ-ի ազգային քարտուղարության ղեկավարը **հարց հնչեցրեց**, որ եթե երկիրը բավարարող առաջընթաց է գրանցել ֆինանսական բոլոր հոսքերի թափանցիկության ապահովման տեսնակյունից և ամեն տարի շարունակում է նույն կարգով ֆինանսական հոսքերը բացահայտել, արդյո՞ք նշանակում է, որ հաջորդ վավերացման ժամանակ դա գնահատվում է որպես բավարարող առաջընթաց, թե՞ ակնկալվում է հավելյալ այլ աշխատանքների իրականացում:

ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության ներկայացուցիչը **նշեց**, որ հոկտեմբերին կայացած ԱՃԹՆ-ի Խորհրդի նիստի ժամանակ այդ հարցը նույնպես քննարկվել է, քանի որ գրեթե բոլոր երկրներն անցել են ԱՃԹՆ-ի վավերացում 2016 թվականի ԱՃԹՆ-ի ստանդարտի հիման վրա, սակայն ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարությունը չունի այդ հարցի պաշտոնական

պատասխանը: **Ավելացվեց**, որ քանի որ 2019 թվականի ստանդարտում, որը պաշտոնապես հաստատվել է 2019թ. հունիսին Փարիզում կայացած ԱՃԹՆ-ի համաշխարհային համաժողովի ժամանակ, ներառվել են նոր պահանջներ, ուստի հաջորդ վավերացման ժամանակ կգնահատվեն նաև այդ պահանջները: Այսպիսով, այն երկրների համար, որոնք իրենց զեկույցները կհրապարակեն 2020 թվականի հունվարի 1-ից հետո, վավերացման ժամանակ կդիտարկվի ԱՃԹՆ-ի 2019 թվականի ստանդարտը:

2. ԱՃԹՆ-ի 2019 թվականի ստանդարտի նոր պահանջների ներկայացում

ԱՃԹՆ-ի միջազգային քատրոլարության երկրի համակարգող **Օլեսյա Տոլոչկոն ներկայացրեց**, ԱՃԹՆ-ի նոր ստանդարտի հիմնական փոփոխությունները և դրանց անհրաժեշտության պատճառները: Այն իր մեջ ներառում է մի քանի նոր պահանջ՝ կապված գենդերի, պայմանագրերի, արտադրության ու արտահանման և բնապահպանական հաշվետվությունների հետ, ինչպես նաև լրացուցիչ խրախուսվող մի քանի դրույթներ (աշխատանքներ):

Առաջին փոփոխությունը ԱՃԹՆ-ի տվյալների համակարգային բացահայտումն է, որի անհրաժեշտությունն առաջացել է՝ հաշվի առնելով, որ շատ երկրներ մեծ հաշվետվությունները թղթային տարբերակով հրապարակելուց անցում են կատարել դրանք էլեկտրոնային եղականով հրապարակելուն, որն ավելի արդյունավետ է և մատչելի: Այս պահանջի հիմնական նպատակը ոչ միայն թղթային տարբերակից էլեկտրոնային տարբերակի անցնելն է, այլ տվյալների համակարգային բացահայտումը և այն գաղափարի խթանումը, որ ԲՇԽ-ի նոր դերն է ոչ միայն տարբեր աղբյուրներից տվյալները հավաքագրելը, այլև տվյալների վերլուծությունը և բացերի հայտնաբերումը:

ԱՃԹՆ-ի ստանդարտի 4.1-ին պահանջով խրախուսվում է պետական մարմիններն և ընկերություններն հաշվետվությունները թղթային տարբերակով հրապարակելուց բացի, համապատասխան կայքերում դրանց էլեկտրոնային հրապարակումը: **Նշվեց**, որ ակնկալվում է, որ հնարավորության դեպքում ընկերությունները պետք է բացահայտեն տարեկան ֆինանսական հաշվետվությունները իրենց կայքերում կամ առցանց այլ հարթակներում: Այս նոր պահանջը կամ պահանջի փոփոխությունը, լրացումը ԲՇԽ-ին ընձեռում է ճկուն գործելու հնարավորություն՝ հասկանալու ինչպես է իրականացվում համադրման գործընթացը և օգտագործելու հավաքագրված տվյալները: Ներկայումս այդ գործընթացն իրականացվում է անկախ ադմինիստրատորի՝

անկախ աուդիտորական ընկերության միջոցով, որը համադրում է պետական մարմինների և ընկերությունների կողմից ստացված տվյալները: Ստանդարտի նոր պահանջը հնարավորություն է տալիս, ԲՇԽ-ին գործընթացում ընդգրկել Հաշվեքննիչ պալատին, որը հետագայում կարող է իրականացնել անկախ ադմինիստրատորի որոշ գործառույթներ:

Ներկայացվեց, որ ԱՃԹՆ-ի ֆինանսական տվյալների հրապարակման զարգացումները տանում են ավելի ապագրեգացված, ավելի ու ավելի մանրամասն տվյալների բացահայտմանը, որը հնարավորություն է տալու առավել մանրակրկիտ վերլուծելու ոլորտը:

Երկրորդ փոփոխությունը տեղեկատվության և ֆինանսական հոսքերի բացահայտումն է ծրագրի՝ ընկերության մակարդակով: ԱՃԹՆ-ն իրականացնող շատ երկրներում կան ընկերություններ, որոնք իրականացնում են մի քանի հանքարդյունաբերական ծրագրեր: Այս նոր պահանջի նպատակն է բացահայտել վճարումները՝ ըստ ծրագրերի, այսինքն՝ ծրագրի մակարդակով ապագրեգացված: Այս պահանջը տարածվում է 2018 հաշվետու ֆինանսական տարվա տվյալների բացահայտման վրա: Ներկայումս Հայաստանում յուրաքանչյուր ընկերություն, բացի մեկից, ունի մեկ արդյունահանման ընդերքօգտագործման իրավունք՝ ծրագիր, սակայն հետագայում պետք է հաշվի առնել վերաբերելի ֆինանսական հոսքերը ծրագրի մակարդակով բացահայտելու պահանջի իրագործելիությունը, եթե գործեն ընկերություններ, որոնք փաստացի կունենան մի քանի թույլտվություններ: Օրինակ՝ ընկերությունների կողմից վճարվող շահութահարկի մասով գործնականում հնարավոր չէ ապագրեցանել թե շահույթը, որ ծրագրից է գոյացել: Այս պահանջը վերաբերում է միայն այն եկամտային հոսքերին ու վճարներին, որոնք հնարավոր է ապագրեցանել: ԲՇԽ-ն հնարավորություն ունի սահմանելու, թե Հայաստանի համատեքստում որն է համարվում ծրագրի մակարդակ: Սովորաբար ծրագրային մակարդակը որոշվում է ըստ թույլտվությունների, սա առավել տարածված մոտեցումն է, սակայն հնարավոր են դեպքեր, երբ մեկ հանքավայրի համար տրված են մի քանի թույլտվություններ: **Երրորդ** փոփոխությունը վերաբերում է պայմանագրերի թափանցիկությանը: Նշվեց, որ Հայաստանն այս պարագայում առաջամարտիկներից է, ուստի Հայաստանի հաջորդ քայլը պայմանագրերի վերլուծությունն է: Ինչ վերաբերում է ընդհանուր պահանջի գաղափարին, ապա 2021 թվականի հունվարի 1-ից պետք է բացահայտվեն բոլոր նոր կնքված պայմանագրերը կամ պայմանագրերում փոփոխությունները: Համապատասխան միջոցառումները պետք է ընդգրկված լինեն այդ երկրների ԱՃԹՆ-ի աշխատանքային ծրագրերում: Ըստ այս փոփոխության՝ օրինակ, Հայաստանի դեպքում խրախուսվում է նկարագրել, թե

ինչպիսի պայմանագրեր կան, գործող պայմանագրերով սահմանված գործընթացներն ինչպես են ընթանում, ինչպիսի թույլտվություններ պետք է ստանալ և այլն:

Չորրորդ փոփոխությունը վերաբերում է գենդերին: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ հանքարդյունաբերական գործունեությունում կանանց նկատմամբ այլ վերաբերմունք է ցուցաբերվում: Կանայք, ինչպես նաև մարզինալ խմբերը, փոքր ազդեցություն ունեն այս ոլորտի կառավարման գործընթացում՝ ունենալով տոկոսային մեծ տարբերությամբ մասնակցություն: Ուստի ոլորտում նրանց ազդեցության բացահայտումն էական նշանակություն ունի երաշխավորելու, որ ոլորտը լավ կառավարվում է, և գործընթացն օգուտ է բերում ողջ հասարակությանը: 2019 թվականի ստանդարտի այս փոփոխության նպատակն է նաև ապահովել է ներկայացվածության բազմազանությունը ԲՇԽ-ում, ուստի ԲՇԽ-ն պետք է հաշվի առնի գենդերային հավասարակշռության գործոնը բազմաշահառու կառավարման առումով: Հանքարդյունաբերության ոլորտում զբաղվածների մեծամասնությունը տղամարդիկ են: ԱՃԹՆ-ի զեկույցներում անդադարձ է կատարվելու նաև ոլորտի զբաղվածության մեջ գենդերային հավասարակշռությանը, ինչպես նաև կանանց առաջխաղացմանը, զբաղեցրած պաշտոններին ու ղեկավար անձնակազմում ներգրավվածության աստիճանին:

Նույնիսկ, երբ տեղեկատվությունը հանրային հասանելի է, սակայն այն ոչ միշտ է նշանակում, որ հավասարապես հասանելի է բոլորին, ուստի ԲՇԽ-ն պետք է քննարկի՝ արդյոք ԱՃԹՆ-ի վերաբերյալ տեղեկատվության հասանելիության հետ կապված առկա է սահամանափակում կանանց կամ այլ մարզինալ խմբերի շրջանում: Խնդիրը վերաբերում է նաև նրան, թե ինչպես են պլանավորվում համայնքների համար սոցիալական ներդրումները, ով է որոշում՝ ինչպես են սոցիալական ներդրումները տրամադրվելու, և ինչպես են դրանք օգտագործվում: Օրինակ՝ Հայաստանում մասհանումները կատարվում են բնապահպանական հարկերից, որոնք տրվում են ազդակիր համայնքներին: Ազդակիր համայնքները ներկայացնում են բնապահպանական և առողջապահական ծրագրեր: Ուստի Հայաստանի դեպքում պետք է ներկայացնել՝ ինչպես են համայնքները դիմում այդ ծրագրերի համար, ինչպես են այդ ծրագրերը մշակվում, և ինչպիսին է դրանց ազդեցությունը՝ դիտարկելով իրականացված ծրագրերի գնահատումը:

Այսպիսով՝ ԲՇԽ-ն, հաշվի առնելով առկա տեղեկատվությունը, մի շարք հիմնախնդիրները, պետք է քննարկի բարելավման ուղղությամբ գործադրվելիք ջանքերը և փաստաթղթավորի դրանք:

Հինգերորդ փոփոխությունը վերաբերում է բնապահպանական հաշվետվողականությանը: ԱՃԹՆ-ն իրականացնող երկրներից կեսից ավելին որոշակի բնապահպանական տեղեկատվություն արդեն իսկ ներառել է ԱՃԹՆ-ի զեկույցներում:

Փոփոխություն է կատարվել ԱՃԹՆ-ի ստանդարտի 6.1-ին պահանջում, որի էությունը կայանում է նրանում, որ եթե կան բնապահպանական վճարներ, որոնք պարտադիր են, օրինակ՝ ամրագրված պայմանագրերում, օրենսդրությամբ, և եթե ԲՇԽ-ն դրանք համարում է էական, ապա այդ վճարները պետք է բացահայտվեն, ինչպես նաև ԲՇԽ-ն է որոշում՝ արդյոք ուզում է դրանք համադրել, թե ոչ: Եթե բնապահպանական վճարները կամավոր են, և ԲՇԽ-ն որոշում է, որ դրանք նույնպես էական կամ նշանակալից են, ուստի խրախուսվում է, որ դրանք ևս բացահայտվեն: **Ներկայացվեց**, որ շատ երկրներ արդեն անում են այդ, և շատ դեպքերում այդ վճարները ընդհանուր վճարների մեջ փոքր մասնաբաժին են կազմում, օրինակ՝ որոշ երկրներում դրանք կազմում են 1%-ից ցածր, որոշ երկրներում էլ՝ մոտ 2%, բայց, այնուամենայնիվ, շատ երկրների ԲՇԽ-ներ որոշել են այդ տվյալները բացահայտել ու նաև որոշ դեպքերում համադրել: Այդ երկրների ցանկում են Ուկրաինան, Ղազախստանը, Մոնղոլիան, և Ֆիլիպինները: **Նշվեց**, որ կան բնապահպանական վճարների տարբեր տեսակներ, օրինակ՝ բնապահպանական վճարներ/հարկեր, արտանետումների համար վճարներ, օդի աղտոտման համար վճարներ, հանքի վերականգնման վճարներ, թափոնների համար վճարներ, ջրի օգտագործման վճարներ, բնապահպանական թույլտվությունների վճարներ, լքված հանքերի հողատարածքների համար վճարներ, անտառների օգտագործման և վառելափայտի համար վճարներ և այլն:

ԱՃԹՆ-ի 2019 թվականի ստանդարտի մյուս փոփոխությունը **խրախուսվող է**. լրացումը կատարվել է ԱՃԹՆ-ի ստանդարտի 7-րդ պահանջում: Սա վերաբերում է ինչպես բնապահպանական ազդեցության կառավարմանը, այնպես էլ մոնիթորինգին: **Ներկայացվեցին** այն երկրների օրինակները, որոնք արդեն իսկ որոշ առումներով կատարում են այդ պահանջը: Ինչ վերաբերում է բնապահպանական ազդեցության կառավարմանը, օրինակ՝ Ղրղզստանում բացահայտվել են համապատասխան իրավական պարտավորությունների գծով բոլոր դրույթները և վարչական դերերը: Հայաստանում արդեն բացահայտվել են այն բոլոր մարմինները, որոնք պատասխանատու են բնապահպանական ազդեցության կառավարման համար: Ինչ վերաբերում է բնապահպանական ազդեցության գնահատմանը, օրինակ՝ Սիերա Լեոնեում առկա է առցանց հարթակ, որը հեշտ հասանելի է, և այդտեղ տեղադրված են բոլոր բնապահպանական ազդեցության գնահատումները՝

նախագծերը և վերլուծված տարբերակները: Այս պահանջի հետ կապված կարելի է, օրինակ, բացահայտել այն մարմինները, որոնք պատասխանատու են բնապահպանական մոնիթորինգի համար, ինչպես նաև տարբեր ռեկուլտիվացիոն ծրագրերը և այդ ծրագրերի իրականացման համար կատարված վճարները: Օրինակ, Պերուում, բացահայտվել են, թե ինչպիսի պատժամիջոցներ են կիրառվել այն ընկերությունների նկատմամբ, որոնք չեն հետևել բնապահպանական կարգավորումներին: Պերուի ԱՃԹՆ-ի զեկույցում ամփոփ ներկայացված է նաև բնապահպանական վճարների, բնապահպանական մոնիթորինգի և կառավարման մասով համապատասխան տեղեկատվությունը և հղումները:

Հանքարդյունահանող ընկերությունների խմբակցության անդամը **հարցրեց՝** արդյո՞ք մարգինալ խմբի սահմանում կա, ո՞ր կատեգորիաներն են մտնում դրա մեջ, և Հայաստանում ո՞ր խումբը կարող է մարգինալ համարվել: **Ներկայացվեց**, որ ԱՃԹՆ-ի ստանդարտը չի սահմանում, թե որ խմբերն են մարգինալ, այն կախված է երկրից ու համատեքստից: Որոշ երկներում դրանք կարող են լինել օրինակ՝ այն համայնքները, որտեղ բացակայում է հանքարդյունաբերության վերաբերյալ տեղեկատվության հասանելիությունը համացանցին հասանելիության բացակայության պատճառով:

ԱՃԹՆ-ի ազգային քարտուղարության ղեկավարը **ներկայացրեց**, որ Հայաստանում ներկայումս բացահայտվում են հիմնական բոլոր հարկերն ու վճարները, որոնց մեջ են մտնում բնօգտագործման վճարը, բնապահպանական հարկը, շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի համալրման, մշտադիտարկումների իրականացման վճարներ, որոնք կարելի է դիտարկել որպես ստանդարտի առաջարկված բնապահպանական վճարներ: **Հարց հնչեցվեց**, թե որքանով են այդ ապագրեգացված տվյալները բավարարում 2019 թվականի ստանդարտի նոր պահանջներին, և արդյոք ԲՇԽ-ն պետք է որոշում կայացնի արդյոք անհրաժեշտ է բնապահպանական հարկի՝ ըստ տեսակների բացահայտումը, թե ըստ թույլտվությունների ու ընկերությունների բացահայտումը նույնպես բավարարում է ստանդարտի նոր պահանջը:

ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության ներկայացուցիչը **պատասխանեց**, որ նախ պետք է ի նկատի ունենալ հավաքագրվող գումարների մասնաբաժինը ընդհանուր եկամուտների մեջ ինչքան է կազմում, իսկ ինչ վերաբերում է ապագրեգացմանը, ապա պետք է հասկանալ բնապահպանական հարկի յուրաքանչյուր մասը ինչքանով է էական: **Առաջարկվեց**, որ ԲՇԽ-ն պետք է քննարկի այս դեպքը և կայացնի որոշում:

Կառավարության խմբակցության անդամը **հավելեց**, որ ներկայումս բնապահպանական հարկը որոշ չափով ապաազրեգացված է՝ ըստ հետևյալ տեսակների՝ բնապահպանական հարկեր՝ ըստ բնապահպանական հարկի և բնօգտագործման վճարների միասնական հարկային հաշվարկների, ԵԱՏՄ անդամ չհամարվող երկրներից ներմուծված ապրանքների համար բնապահպանական հարկեր՝ ըստ ներկայացված մաքսային հայտարարագրերի, ԵԱՏՄ երկրներից ներմուծված ապրանքների համար բնապահպանական հարկեր՝ ըստ ներկայացված ներմուծման հարկային հայտարարագրերի, և դրանից առավել տեսականորեն պահանջելը կախված է նպատակահարմարությունից:

Կառավարության խմբակցության անդամն **ավելացրեց**, որ օրենքով սահմանված բնապահպանական հարկերի տեսակները, առանձնացված ըստ առանձին ենթատեսակների, ներառված են միասնական հաշվարկի մեջ, և ինչ վերաբերում է հաշվարկային ցուցանիշներին, ապա ամեն մեկն իր առանձին տողով ներկայացված է, որն ընդհանուր հանրագումարի է բերվում, ուստի հաշվետու ժամանակշրջանի հաշվարկված գումարի մասին տեղեկատվությունն առկա է: Ինչ վերաբերում է վճարած գումարներին, ապա 2018 թվականի հարկային օրենսգրքով սահմանված միասնական հաշվի կիրառումը հնարավորություն չի տալիս տարանջատել բնապահպանական հարկը ըստ առանձին տեսակների, քանի որ դրանք հաշվառվում են որպես մեկ ընդհանուր պարտավորություն, ուստի տեղեկատվությունը կարող է տրամադրվել միայն հաշվարկային ցուցանիշների մասով:

ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության ներկայացուցիչը **նշեց**, որ պատահիր ու էական բնապահպանական վճարները պետք է բացահայտվեն, իսկ դրանց համադրումը կախված է ԲՇԽ-ի որոշումից: Ինչ վերաբերում է Հայաստանին, ապա Հայաստանն արդեն զեկույցում բացահայտել է, թե որոնք են պարտադիր, ուստի ԲՇԽ-ն առավել պետք է աշխատի ստանդարտի 6.4-րդ պահանջի՝ բնապահպանական ազդեցության կառավարման և գնահատման ուղղությամբ՝ օրինակ, տրամադրելով բնապահպանական ազդեցությունների գնահատումների հղումները, վերլուծել դրանք, նկարագրելով ինչպես է իրականացվում մոնիթորինգը, գործնականում ինչ պատժամիջոցներ են կիրառվել ֆիսկալ տարվա ընթացքում:

Ներկայացվեց, որ, համաձայն նոր ստանդարտի, ավելի ճկունություն է մտցվում, և ԲՇԽ-ն կարող է որոշում կայացնել ԱՃԹՆ-ի տարեկան հաշվետվության կազմման ու հրապարակման ժամկետի վերաբերյալ, ինչպես նաև ընտրել հաշվետվությունների ներկայացման մեթոդը և ձևաչափը, որ պետք է ուղղված լինի ԱՃԹՆ-ի իրականացման արդյունքների և ազդեցության

ներկայացմանը: Այսպիսով՝ ԱՃԹՆ-ն իրականացնող երկրները այսուհետև պարտավորված չեն մինչև հուլիսի 1-ը հրապարակելու տարեկան հաշվետվությունները:

Ներկայացվեց, որ այժմ ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության կողմից պատրաստվում են այս նոր փոփոխությունների հետ կապված ուղեցույցներ:

3. Այլ հարցերի քննարկում

ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության կողմից **հարց տրվեց** ԲՇԽ-ի անդամներին՝ որոնք են հաջորդ տարվա առաջնահերթությունները:

Քաղաքացիական հասարակության խմբակցության անդամը **պատասխանեց**, որ իրական սեփականատերերի բացահայտումը, ԱՃԹՆ-ի շրջանակի ընդլայնումը՝ առաջիկա նախնական ուսումնասիրության շրջանակում մետաղական օգտակար հանածոների արդյունահանման ոլորտի երկրորդային շղթան՝ մետաղական բնական պաշարների վերամշակման (ներառյալ հանքաքարի և խտանյութի առք ու վաճառքով զբաղվող տեղական կազմակերպությունների գործունեությունը) ոլորտը և ստորերկրյա հանքային ջրերի արդյունահանման ոլորտը ներառելու հարցի ուսումնասիրությունը, պատասխանատու հանքարդյունաբերության գոծելաոճի ներդրումը՝ «Հայաստանյան ԱՃԹՆ-ի բազմաշահառու խմբի մոտեցումը պատասխանատու հանքարդյունաբերության վերաբերյալ» հայեցակարգային փաստաթղթում Հայաստանի համար սահմանված առաջնահերթությունների իրականացումը, տվյալների համակարգային բացահայտումը:

ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության ներկայացուցիչը **նշեց**, որ մետաղական հանքարդյունաբերության մասով Հայաստանը բացահայտել է ԱՃԹՆ-ի ստանդարտով պահանջվող ամբողջ տեղեկատվությունը, իսկ ինչ վերաբերում է արդյունահանման այլ ճյուղերին, կան ԱՃԹՆ-ի անդամ երկրներ, որոնք ընդլայնել են իրենց շրջանակը: Օրինակ՝ Ալբանիան ԱՃԹՆ-ի շրջանակում դիպարկում է հիդրոէներգիայի արտադրությունը, Մյանմարի ԱՃԹՆ-ի զեկույցում ընդգրկվել է անտառային տնտեսության ոլորտը, իսկ Մոնղոլիայի ԱՃԹՆ-ի զեկույցում՝ ոչ լրիվ համակողմանի կերպով ընդգրկված է ջրերի արդյունահանման ոլորտը: **Նշվեց**, որ ԱՃԹՆ-ի շրջանակի ընդլայնումը ԱՃԹՆ-ի ստանդարտի պարտադիր պահանջ չէ, սակայն, եթե ԲՇԽ-ի համար այն կարևոր է, ապա դա նույնպես ողջունվում է:

ԱՃԹՆ-ի ազգային քարտուղարության ղեկավարը **հարց հնչեցրեց**, որ եթե Հայաստանի ԱՃԹՆ-ի ԲՇԽ-ն որոշի ընդլայնել շրջանակը, արդյոք ԱՃԹՆ-ի

ստանդարտի բոլոր պահանջները տարածվելու են նաև այդ ոլորտների վրա, թե այդ ոլորտների մասով կարող են բավարարվել միայն որոշակի պահանջները:

ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության ներկայացուցիչը **պատասխանեց**, որ ԱՃԹՆ-ի ստանդարտի բոլոր պահանջների կատարումը օրինակ՝ Հայաստանի դեպքում, վերաբերում է մետաղական հանքարդյունաբերության ոլորտին, իսկ այլ ոլորտներ ընդգրկելիս ԲՇԽ-ն է որոշում, թե ԱՃԹՆ-ի ստանդարտի որ պահանջների իրականացումն է նպատակահարմար:

ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության ներկայացուցչի կողմից **տրվեց հաջորդ հարցը** ԲՇԽ-ին՝ արդյոք այդ առաջնահերթությունները բավարար չափով արտացոլված են աշխատանքային ծրագրերում, ճանապարհային քարտեզներում, ազգային առաջնահերթություններում, թե առկա են բացթողումներ, ինչպես նաև ինչպիսի ազդեցություն է ունեցել ԱՃԹՆ-ի իրականացումը Հայաստանում:

Քաղաքացիական հասարակության խմբակցության անդամը **պատասխանեց**, որ հնչեցված բոլոր առաջնահերթությունները ընդգրկված են ինչպես ազգային առաջնահերթություններում, այնպես էլ աշխատանքային ծրագրում:

ԲՇԽ-ի կառավարության խմբակցության անդամը որպես հաջորդ տարիների համար կարևոր առաջնահերթություն **կարևորեց** վավերացումից հետո էլ ԲՇԽ-ի հաջողված հարթակի պահպանումը: **Նշվեց**, որ առաջնահերթությունները ներառված են բոլոր թվարկված փաստաթղթերում, դրանք քննարկվել են համատեղ և յուրաքանչյուրի քննարկումների արդյունքն է, որի հիման վրա Բազմաշահառու խումբն եկել է ընդհանուր համաձայնությամբ (կոնսենսուսով) որոշման: Քաղաքացիական հասարակության խմբակցության անդամը Հայաստանում ԱՃԹՆ-ի իրականացման ազդեցության վերաբերյալ **նշեց**, որ ԱՃԹՆ-ի զեկույցը համապարփակ տեղեկատվություն է պարունակում և շատ կարևոր է օրենսդրական փոփոխությունների, ոլորտի բարեփոխումների համար առաջարկներով հանդես գալու տեսանկյունից:

ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության ներկայացուցիչը **հարցրեց** ԲՇԽ-ին՝ բացի իրական սեփականատերերի բացահայատման ուղղված օրենսդրական փոփոխություններից, ինչ օրենսդրական փոփոխություններ են առաջիկայում ակնկալվում:

Կառավարության խմբակցության անդամը **ներկայացրեց**, որ ներկայումս ընթացքի մեջ է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և

փորձաքննության մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին նախագիծը, բացի իրական սեփականատերերի բացահայտման ուղղված փոփոխությունը, ՀՀ ընդերքի մասին օրենսգրքում նախատեսվող մի շարք այլ փոփոխությունները, օրինակ՝ վիճակագրական հաշվետվությունները որպես պարտադիր ներկայացվող հաշվետվություն սահմանելը: ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության ներկայացուցիչը **նշեց**, որ ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարությունը հետևողական է լինելու գործընթացին, և եթե հարցեր լինեն, որոնք փոխկապակցված են ԱՃԹՆ-ի հետ, Հայաստանը կարող է դիմել նաև ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարությանը խորհրդատվություն ստանալու նպատակով:

ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության ներկայացուցիչը **հարցրեց** ԲՇԽ-ի անդամներին՝ արդյոք իրենք բավարարված են որոշումների ընդունման գործընթացից և տարբեր խմբակցությունների միջև համագործակցությունից:

Քաղաքացիական հասարակության խմբակցության անդամը հարցի վերաբերյալ **ներկայացրեց**, որ մինչ ԲՇԽ-ի պաշտոնական կազմավորումը քաղաքացիական հասարակության կողմից կոնկրետ հարց էր բարձրացվել խմբակցությունների ընդհանուր համաձայնության (կոնսենսուսի) հիման վրա որոշումների ընդունման մեխանիզմի պարտադիր կիրառման հետ կապված, որը կոնկրետ քաղաքացիական հասարակության խմբակցության համար որոշումների ընդունման լավագույն տարբերակն է համարվում: Ընդհանուր համաձայնության (կոնսենսուսի) հիման վրա որոշումների ընդունման մեխանիզմը կիրառվել է ԱՃԹՆ-ի գործընթացի սկզբից: Քաղաքացիական հասարակության խմբակցության մեկ այլ անդամ **հավելեց**, որ գործնականում այդ մեխանիզմը աշխատող է, Հայաստանի ԱՃԹՆ-ի ԲՇԽ-ի պրակտիկայում բոլոր որոշումները ընդունվել են կոնսենսուսով, և ԲՇԽ-ի աշխատակարգում սահմանված այլ մեթոդի դիմելու անհրաժեշտություն չի եղել, այն է՝ որոշման վերաբերյալ ընդհանուր համաձայնության (կոնսենսուսի) բացակայության դեպքում որոշումը քննարկվում է ԲՇԽ-ի անդամների հետ միջնորդի միջոցով, ուստի կարելի է ասել, որ հիմնականում այդ բավարված է որոշումների ընդունման գործընթացով, ինչպես նաև տարբեր խմբակցությունների միջև համագործակցությունից:

Կառավարության խմբակցության անդամը **նշեց**, որ համագործակցության նման ձևաչափը կարևոր է նաև պետական կառավարման մարմինների համար, քանի որ ոլորտային նշանակության հարցերը քննարկվում են բազմակողմ՝ բոլոր հնարավոր շահագրգիռ կողմերի մասնակցությամբ: **Նշվեց նաև**, որ կարող է փաստվել, որ այն համագործակցության նոր մակարդակ է, որը պետք է զարգացնել նաև այլ ոլորտներում. ինչու ոչ նաև այլ ոլորտները նույնպես կարող

են իրենց մասնավոր հատվածի գործընկերի և քաղաքացիական հասարակության հետ համագործակցությունը կազմակերպեն նման ձևաչափով: Այլ կերպ ասած՝ համագործակցության այս ձևը արդյունավետ մեթոդ է, կենսունակ և պահանջված պետական համակարգի կառույցների կողմից:

ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության կողմից **ողջունվեց** Հայաստանում լավ համագործակցության կայացումը, քանի որ դա վկայում է նրա մասին, որ Հայաստանի ԱՃԹՆ ԲՇԽ-ի բոլոր անդամները ներգրավված են ԱՃԹՆ-ի գործընթացում և իսկապես մտահոգված են ԱՃԹՆ-ի արդյունավետ իրականացմամբ:

Քաղաքացիական հասարակության խմբակցության անդամը **տեղեկացրեց**, որ քաղաքացիական հասարակության խմբակցությունը ընդունել է մի որոշում, համաձայն որի խմբակցության անդամների մեջ ազդակիր համայնքներն ունեն քվոտա մասնակցության համար, և ԱՃԹՆ-ի իրականացման գործընթացում համայնքները նույնպես պետք է շատ ակտիվ լինեն: **Ներկայացվեց նաև**, որ բնապահպանական խնդիրները, որոնք բարձրացվում են գրեթե բոլոր համայնքներում և քաղաքացիական հասարակության գրեթե բոլոր ներկայացուցիչների կողմից, այս հարթակում շատ ավելի մեծ տեղ կգտնեն: **Առաջարկվեց նաև** ԲՇԽ-ում քննարկել Առողջապահության նախարարությունից ներկայացուցիչ ունենալու հարցը, քանի որ քաղաքացիական հասարակության կողմից բարձրացվում են նաև առողջապահական խնդիրներ:

ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության ներկայացուցիչը **հարցրեց** ԲՇԽ-ի անդամներին նաև ԱՃԹՆ-ի բացահայտած տվյալների գործնական կիրառության մասին՝ ներկայացնելով օրինակներ, և ըստ իրենց ինչպես կարելի է բարելավել այն:

Կառավարության խմբակցության անդամը **նշեց**, որ, օրինակ, քաղաքացիական հասարակության կողմից կազմակերպվել են մարզային հսկայական աշխատանքներ, մարզային այցելություններ, որի ժամանակ տրամադրված տեղեկատվությունը ԱՃԹՆ-ի բացահայտված տվյալների հիման վրա են եղել, ինչը ԱՃԹՆ-ի առաջին զեկույցի արդյունքում եղած հիմնական ձեռքբերումներից է:

Քաղաքացիական հասարակության խմբակցության անդամը, որպես գիտական համայնքի ներկայացուցիչ, **նշեց** տվյալների կարևորության մասին հանքարդյունաբերության ոլորտի մասնագիտական տեսանկյունից: Ինչպես նաև **տեղեկացվեց**, որ ԱՃԹՆ-ի առաջին զեկույցի հրապարակումից հետո ԱՃԹՆ-ի քարտուղարության կողմից կազմակերպվել է զեկույցում բացահայտված

տվյալների ներկայացում Երևանի պետական համալսարանում ուսումնական գործընթացին մասնակից ներկայացուցիչների համար՝ դասախոսական անձնակազմ և ուսանողներ, ովքեր առաջիններից են, որ սկսեցին օգտվել այդ տվյալներից: **Ներկայացվեց**, որ այդ տվյալներն օգտագործվում են ավելի խորքային ուսումնասիրություններ և հետազոտություններ կատարելու համար:

Նիստի ավարտին **ներկայացվեց** քաղաքացիական հասարակության խմբակցության անդամների նոր կազմը, որը բաղկացած է հինգ հիմնական անդամից, որոնցի մեկը գիտական համայնքի ներկայացուցիչ է, մեկը՝ մարզային ներկայացուցիչ, ով կներկայացնի մարզային օղակների կարիքները, ինչպես նաև երկու այլընտրանքային անդամից: ԲՇԽ-ի քաղաքացիական հասարակության խմբակցության նորընտիր անդամները ներկայացան և ներկայացրին իրենց ակնկալիքներն ԱՃԹՆ-ից: **Նշվեց**, որ նորընտիր անդամների լիազորություններն ուժի մեջ են մտնելու 2019 թվականի նոյեմբերի 25-ից: